



## ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԵՒԱՅ ԸՆԴԱՐԱԹ 12 ՓԵՏՐՈՒԱՐ 1872

ԹԻՒՆ 929

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայի և Ամերիկայի լրագիրներն՝ ըստ մեծի մասին զբաղեցնել են Միացեալ Միջազգայն հասարակարկութեան և Մեծի խիստանոյ կառավարութեան մէջ պատահած ծանր վէճին վրայօք, որ Աւստրալիայի խնդիր անսովոր ծանուցեալ է, և քանի մը տարիէ ՚ի վեր կը սպասուի յիշեալ երկու մեծ տէրութեանց բարեկամական յարաբերութիւններն աւելնու :

Հայտնի է թէ հարաւային Ամերիկայի այս հոգեկաւոր շոգեհաւ՝ որ Անգղիոյ նաւահանգստաց մէջ ամեն կերպ օգնութիւններ կը պահէր, մեծամեծ փնտռելի պատճառից հետեւային ամերիկացոց և իսպանացիներէ հարաւային ապստամբացի ուրիշ շատ շոգեհաւները՝ որոնք սոսկալի հարուածներով կը հալածէին հիւսիսային Ամերիկայի վաճառական նաւերը, որքան յայտնի կերպիւ պաշտպանութիւն կը պահէին անգղիական նաւահանգստաց մէջ : Ստորի պատերազմը լմընալէ ետեւ, Միացեալ Միջազգայն կառավարութիւնը յիշեալ ծովային պատճառաւ նաւուց պատճառած փնտռելիքը Անգղիոյ կառավարութիւնէն պահանջեց, որ շատ ընդդիմութիւններէ ետեւ, վերջապէս պարտաւորեցաւ այս պահանջման օրինակով ուրիշը ճանաչել ըստ սկզբանց և հետեւաբար երկու կողմանց փոխադարձ հաստատութեամբ հինգ միջնորդ դատարարներէ բաղկացեալ ատենի մը յանձնուեցաւ, որ այս վէճին վախճան միտայ բարեկամարար : Հիշեալ ատենին հինգ տնօրէններէ հետեւալ հինգ տնօրէններէն կարգուեցան, որք են Միացեալ Միջազգայն, Անգղիա, Պրուսիա, Իտալիա և Օվիցիէի հասարակարկութիւնը : Ատենը ճիշդ վրայի մէջ բացուեցաւ, և մինչդեռ միջնորդ դատարարները կաշխատէին բարեկամական և օրինաւոր լուծում միտալ զործոյն, Ամերիկայի հասարակարկութեան յառաջ բերած պահանջմանց չափազանցութիւնը ատենին ընթացքը առժամանակեայ կերպիւ դադրեցուց, քանզի յիշեալ պահանջմանը պահանջը շատ են, որոց ապացոյցները և փաստերը եօթը մեծ հասարակարկութեան մասեաններ կը կազմեն : Իրաց այս արտաքին կարգի վիճակին մէջ, հասարակաց կարծիքը մեծապէս խռովեցաւ Անգղիոյ մէջ և լրացեալները սկսան զրուցել թէ յիշեալ ատենանք չիրար իրաւունք ունենալ այսպիսի ծանր պահանջմանց վրայօք դատաստան ընել և որոշում միտալ :

Այս խնդրոյն նկատմամբ Անգղիոյ թաղութային գահաւստութեանը մէջ հետեւեալ կը կարգաւորուէր .

«Յերկուց կողմանց ցուցակներ յանձնուեցան միջնորդ դատարարաց, իւրաքանչիւր կողմը իւր իրաւունքը և իւր պահանջմանքը յառաջ բերելով . սակայն Միացեալ Միջազգայն ցուցակին մէջ նշանակուած ատենի լիքը ՚ի փոխարէն փնտրուց, այնչափ մեծ ու ընդարձակ են, որ շատ իմ կարծեաց՝ միջնորդ դատարարաց ատենելու զործը չէ : Այս կէտին նշեալ կառավարութեան համակարգի մի գրեւորի Միացեալ Միջազգայն կառավարութեանը :

Ինչպէս կը տեսնուի, բարեկամական բանախօսութիւնները արդէն սկսած են Ամերիկայի և Անգղիոյ մէջ վերջիվերջալ վէճին կարգադրութեանը համար, և ընդհանրապէս կը յուսացուի թէ առանց պատերազմի պիտի լմընայ այս ծանր խնդիրը : Սակայն արդեօք Ամերիկայի Միացեալ Միջազգայն կառավարութիւնը ներքին որոշում մի ունի՞ անպատճառ պատերազմ բռնալ Անգղիոյ դէմ : Այս կէտը գիտնալ պէտք է . վասնզի եթէ այսպիսի դադան որոշում մի եղած է, անօգուտ պիտի ըլլան հաշտարար ու բարեկամական ջանքերն : Պահանջմանց դաւաճարին չափազանցութեանը նայելով, Ամերիկայի միտքը դրած է իւր հինգ տնօրէն վրէժը առնուլ Անգղիայէն, որուն

հետ բաղդատելով իւր ծովային և ցամաքի զօրութիւնները և ուրիշ առաւելութիւնները, կը զգայ թէ յաղթական պիտի հանգիստանայ : Սակայն այսպիսի լուսաւորեալ դարու մէջ, առանց ազգային սիր և հարկաւորութեան, յատուկ որոշմամբ և պաշարիւնով մի պատերազմ բռնալ՝ այնպիսի արտաքին կարգի բան մըն է, որ ոչ ոք կը նայ հաւատալաւանց թընդանօթաց ձայնը լսելու :

Կաղղիացի լրագիրը՝ յորմէ քաղցրիկ նախընթաց քանի մը տղերք, կը յաւելու թէ այսպիսի պատերազմ մի՞ նիւթական օդոց նկատմամբ թէպէտեւ մեծ յաջողութիւն մըն է Կաղղիոյ համար, որուն բամպակեղէն և ուրիշ ձեռագործները մեծ օգուտ պիտի քաղեն Անգղիոյ ձեռագործ ապրանքային շախմատէն, նմանապէս կաղղիացի նաւերը՝ Հոլանտայի և Անգլիական քաղաքացի նաւուց հետ, պիտի դրուեն աշխարհի առեւտուրը, և սակայն կաղղիացի ժողովը, դեռ միտքէն անդամ չեն անցնիր, կըսէ, այս օգուտները, միայն թէ Կաղղիական երբեք չիրար ներել Անգղիոյ վասն իւր անտարբեր ընթացքին, զոր ունեցաւ վերջին պատերազմական դէպքերուն մէջ :

Այս պատճառաւ, Անգղիական առանց դաշնակցի պիտի մնայ, կըսէ յիշեալ կաղղիացի լրագիրը, քանզի չիրար յոյս մի ունենալ Ռուսիայէն, որ դաշնակցի է Ամերիկայի Միացեալ Միջազգայն . չիրար նաեւ վստահանալ Վերմանիոյ վերայ՝ որ դաշնակցի է Ռուսիոյ : Կաղղիական լրագիրը և իտալիոյ, այս աւերութիւնները խնդիրներ բոլորովին դուրս են իրենց աշխարհագրական կայունութեամբը . հետեւաբար Անգղիական չարակամ չէ զոք ատենութիւններ միայն պիտի ունենայ իւր չորս կողմը, և այս պատերազմը պիտի ըլլայ իւր քաղաքական ազդեցութեան վերջը, եթէ անով կորսնցնէ ծովուն վերայ ունեցած իւր վեհապետութիւնը . որ անտարակոյս պիտի կորսուի ՚ի պատահել այսպիսի ձախող պատերազմի մը :

#### ԱԶԳԱՅԻՆ

Գահիրէի ազգային քաղաքական ժողովոյն մեծարդոյ անդամքը, որք միանգամայն խորհեանքն զպրոցին հոգաբարձութեան անդամքն են, հետեւեալ նամակը յուղարկած են միջ ՚ի հրատարակութիւն .

Գահիրէ, 24 Յունուար 1872

Յարգոյ խմբագիր Աշադաշադ :

Ամենապատիւ Եւայի Ս. Պատրիարք ՚ի վերջոյ համուրէն է որ իւր պաշտօնական ամազրին անպիտան յողովանքները ազդեցութիւն չեն ընեն հասարակութեան վերայ . վասնորոյ ՚ի Կ. Պոլս հրատարակուած Օրադիւն անուն թերթին պաշտպանութիւնը կը մտայ, որուն 643 և 646 թիւերով, իւր կորսնցուցած անիրաւ դատը պաշտպանելու կը լիքէ . մոռնալով սակայն որ պաշտօնապէս դատաւարտեալ մը զրամները արժէքը չեն չեն կընար ունենալ, մանաւանդ որ արդարութեան առեւտին դատաւիճութեան վերաբերութեան ժողովին իսկ վաւերաւորացած է :

Տեսնենք ի՞նչ կըսէ Նորին Սրբազանութիւնը : Եղիպտական խնդրոյն երեք գլխաւոր մասերու բաժնուած ըլլալը կը մտնէ . ըսել է որ հազար անգամ հրատարակած նորէն կը կրկնէ : Կըսուի որ երկարորէն պատասխանելու ժամանակ չունիմք այսօր . քանզի մեր ամենապիւրի բարեխնամ առաջնորդին բարի գաղաւթը չնորհաւորելու համար յԱղէյսանդրիա կը ջնջենք, որ ըստ հրամանի բարձրա, Խրտիվին մեծ ու փոքաւոր հանդիսի պիտի ըլլայ Նորին Սրբազանութեան ընդունելութիւնը ՚ի պատիւ ազգայն : Առայժմ կարծի կը պատասխանենք ամեն մէկ խնդրոյն, խոստանալով որ ՚ի վերադարձին նորէն կը տեսնուինք :

Եւայի Ս. Պատրիարքը նախ առաջնորդական խընդիրը կը յուղէ և կը պնդէ որ Եղիպտոսի առաջնորդները

միշտ Երուսաղէմայ Միաբանութեան կողմէն կը զրկուեն . որոց վերջինք՝ այսինքն Երուսաղէմայ միաբան Պարթէլ Եղիպտոսը՝ իւր առաջնորդութեան ժամանակը Եղիպտոսանալ կըբաղձայ, և անարժան կը դատուեն . Եւայ քանի մը շահասկը անձանց օգնութեամբ և Յակոբոս Պատրիարքի օժանդակութեամբ կ'եղիպտոս, ստանայ և անիրաւ միջոցներու կը խոնարհի :

Կըսուի ամենայն նախ որ մենք չենք ուզեր աստ զհանդուցեալ Պարթէլ Եղիպտոսը պաշտպանել . քանզի վրայի . այլ կուզենք զիստալ որ, եթէ արդարեւ Պարթէլ Եղիպտոս անարժան էր Եղիպտոսութեան, ինչպէս ուրեմն արժանացաւ առաջնորդութեան : Եթէ Պարթէլ սրբազանը՝ Երուսաղէմայ Միաբանութեան լուծը նեւտեց վրայէն, միջոցն ևս անցնէ վաւերաւ միաբան չէ . և եթէ միաբան մը իւր միաբանութեան դէմ յեղափոխութիւն հրատարակէ և անիրաւ միջոցներու խոնարհի, յանցանքը սրտէ կը զգարենք . իւր առաջնորդած հոգեւոր հօտին թէ հոգեւորական : Այս հարցումներն ալ մէկ կողմ ձգելէ ետեւ Եւայի Պատրիարքին ամեն զրամները իւր ճշմարտ և առողջ կը կոչուին ընդունել . որակայն թող ներէ մեզ Երուսաղէմայ Ս. Պատրիարքը, որ Պարթէլ Եղիպտոսին առ Ստատու փոխելուն առթիւ առ Եղիպտոսայոյ գրած միւլթարական նամակին քանի մը խօսքը հրատարակեմք աստ . տեսէք ի՞նչ կըսէ . «Եղիպտոսայոյ . Երուսաղէմայ միաբանութեան յարգը ճանչցէք, որ ժամանակին այսպէս բարեխնամ և ժողովրդաւոր առաջնորդ մը զրկելն» . Եւ աւելի վաւեր կը յայտնուի . «Ամենապատիւ ՚ի զիտեղ թէ ուստի է չնորհալ» : Այս խօսքերը հանգուցեալ Պարթէլ Եղիպտոսին համար գրուած են, ինչպէս նաեւ Օրադիւն թերթին հրատարակածներն ալ նոյնին համար են : Արդայժմ մենք Եւայի Պատրիարքին ո՞ր գրածին հաւատանք . առաջինին թէ վերջինին . կաղաչեմք զՆորին Սրբազանութիւնն, որ այս հակասութիւնը պարզէ հրապարակու, որպէսզի ողջամիտ հասարակութիւնը գիտնայ թէ ո՞վ է անարժան միջոցներու խոնարհելու, Պարթէլ Եղիպտոսն է թէ Եւայի Ս. Պատրիարքը : Ըստ մեզ ճշմարտութեան այն է որ՝ հանգուցեալ Երուսաղէմայ միաբանութեան ոգին լուծանալով իւր քաղաքականութիւնը ժամանակին բանեցուց . բայց այսօր ինչո՞րք բոլորովին փոխուած է, և ժողովրդը իւր ազատ կամաց արդիւնքը կը վայելէ . ուստի Եւայի Ս. Պատրիարքը ի՞նչ իրաւունք ունի այս մասին զանգատելու և բողոքելու թէ ինչո՞ւ Եղիպտոսայոյ չեն ուզեր իւր հոգեւոր իշխանութեան ներքեւ մնալ : Այս Եղիպտոսայոյ կը մերժեն զայն . վասնզի Եւայի Պատրիարքը բռնութեամբ կառավարել սովորած է, ինչպէս որ կը կատարէ գիւր միաբանութիւնը, և կը կարծէ թէ թշնամանելով բռնութեան դէմ զինուորներ՝ կը յաղթահարէ . այդ կարծիքով թող սփոխի : Չմոռնանք սակայն իւր գրածը թէ՛ Երուսաղէմայ միաբանութիւնը իւր մեծ շնորհ առաջնորդ յուղարկած էր ՚ի Գահիրէ գրաբիւնամ և ժողովրդաւոր Պարթէլ Եղիպտոսը . որուն անիրաւ միջոցներու խոնարհելուն դէմ կը բողոքէ այսօր, առջի թէքածը լիւրով առաջնորդութեան առթիւ :

Գահիրէ երկրորդ խնդրոյն, այսինքն կառուածականին, զոր մենք իրաւամբ ընդնցած խնդիր կանուանեմք :

Եւայի սրբազանը կը զանգատի կառուածոց համար՝ իւր թէ Եղիպտոսայոյ զանոնք իրենց սեպհականեղ կաշխատին և այս զործոյն մէջ յաղողելու համար կը վատահարաւեն, կըսէ, Երուսաղէմայ միաբանութեան վարդապետները և իրենց առաջնորդ կընտրին զգերա . Մեքայի Եղիպտոսը :

Կըսուի ամենայն նախ որ կրկնած եմք շատ անգամ, թէ կառուածական խնդիրը արդէն երկու կողմանց փոխադարձ հաւանութեամբ վերացած է . իսկ եթէ ամենապատիւ Եւայի Պատրիարքը այժմ չհաւանիր եղած սրբազաններուն, իւր գիտնալու բանն է, և ուղածը ընելու աղաւտ է : Բայց դառնով Երուսաղէմայ վարդապետնեւ



ըն վստահամբարեւել մասին, կըսենք, թէ վստահամբարեւել վարդապետները՝ իրենց անարժան և անվայել ընթացքովը վստահամբարեւել, ինչպէս դատարար տեալ Աստուր վարդապետը և իւր նմանները: Քանզի բնական է այս օրէնքը թէ՛ գէշին աղէկ և աղէկին գէշ չըսուիր. և թէ՛ յիշեալ Աստուր վարդապետը իւր վստաւթեանց համար վստահամբարեւել, գերա. Մեսրոպ սրբազանն ալ իւր խոհական վարուց ու ազգագրութեամբ թեանց համար ի լուր աշխարհի բարի համբաւով հռչակուեցաւ:

Անցնինք երրորդ խնդրոյն. ըսել կուզենք այն խնդրոյն՝ որուն դատարարութեան վճիռը պաշտօնապէս հրատարակուած է և վերաքննուելով կրկին դատարարութեամբ: Եւսոյի սրբազանը կուզէ սոյն խնդիրը ընդհանուր վերածել անդէրով, որ Աստուր վարդապետը, Եւրոպացի միաբանութիւնը՝ հանդերձ իւր Պատրիարքով, և Գասպարեանք հանդերձ իրենց տասնի չափ համամիտներովը՝ որոնք օտար ազգերէ կը բաղկանան՝ մէկ կողմէ, իսկ Աղէքսանդրիոյ ազգային վարչութեան անդամները, գերա. Մեսրոպ սրբապետը և մեծապատիւ Յակոբեանք միւս կողմէ, իւր երկու կողմանց դատարարներ ներկայանան, որպէսզի այս երկու կողմանց մէջ կըսած վստաւթեանց յայտնուի (և թէ՛ մինչ ցարդ չէ յայտնուած): Կըսուան ինչ որ այս առաջարկութեանը. բայց մեծ դժուարութիւն մի կընշուի. րենք անոր գործադրութեան մէջ. քանզի եթէ Եւսոյի սրբազանին խնդրած անձինքը ի Կ. Պոլսի երթալու յանձնառու իսկ ըլլան, աղքատիք Քաղաքական ժողովոյն ձեռնհասութեան վերէ գանձեց դատել. ըստ ուրում, ինչպէս Նորին Արքայութիւնն ալ քաջ գիտէ, յիշեալ բաղձաթիւ անձանց մէջ օտար տէրութեանց հպատակներ կը դառնան: Աւստի այս դժուարութեան առաջը առնելու համար, մենք ուրիշ ամենադիւրին ճամբայ մի կ'առաջարկենք. այսինքն կը խնդրենք ամենա. Եւսոյի Պատրիարքին որ բարեհաճի գալ յԱղէքսանդրիա. ուր ամեն միջոց և դիւրութիւն պիտի ունենայ ուղած կերպովը վարել իւր դատը: Քանզի նախ՝ երկու հակառակորդ կողմանց դատարարներն աստ են. երկրորդ՝ ամեն տէրութեանց հիւպատոսարանները բաց են արդարութիւնը պաշտպանելու և անխառնութիւնը դատարարութեան համար, եթէ հարկը պահանջէ: Առհայտ ըստ օրէնքի, և ըստ դատարարութեան և Եւսոյի առաջարկութեան Պատրիարքարանէն կարգեալ Յանձնաժողովոյն, Աստուր վարդապետին զրպարտիչ դատին պատճառաւ Եզրիպասայոց ըրած մեծագուժար ծախքը՝ զոր Եւսոյի Ս. Պատրիարքը կը պարտաւորի հատուցանել իւր պահանջած կտրուկ միջոցները գործադրուելով հանդերձ դատը կորսնցնելուն համար, յիշեալ մեծագուժար ծախքը, կըսենք, նախապէս պէտք է որ վճարէ. քանզի եթէ ոչ այսօր, անուշտ վաղը պիտի ստիպուի վճարելու: Եւ երբ այս օրինակը վճարուի ընէ, յայնժամ և մենք Եզրիպասայոց պատրաստ ենք իւր առաջարկութիւնը ամենայն սիրով և յօժարութեամբ ընդունելու:

Հաճեցէր, յարգելի խորագիր, մեր այս յօդուածը հրատարակել ձեր պատուական լրագրոյն մէջ, հանդերձ ստորագրութեամբ մերով:

Անդամք հաղարարութեան Խորհրդանշան  
Հայրոցին և ազգային Քաղաքական ժողովոյն:

Ա. Ս. Ղօնմայեան  
Ս. Տագեան  
Ի. Միլիքեան:

Աղէքսանդրիայէն հետեւեալ ազգային յօդուածը յուղարկած են մեզ ի հրատարակութիւն. Ժամանումն Մեսրոպ սրբազանի յԱղէքսանդրիա:

Հունուարի 26ին չորեքշաբթի առաւօտուն վեճակիս արժանընտիր Առաջնորդ գերա. տէր Մեսրոպ սրբազան արքեպիսկոպոսն աւստրիական շոգենաւով ժամանեց ի նաւահանգիստ մեր. որուն սուրբ Աջը համբուրելու ջերմեանք փափաքանք խուռն բաղմունքին հայոց գումարուած էին ի թիւրահանէն, ուր պիտի ելլէր սրբազանը: Համաձայն պաշտօնական հետազոյն տնօրէնութեանը, որ Վահագնէն իշխանութեան կողմանէ յուղարկուած էր, 18 թիւ վերկու փառաւոր նաւակներ շոգենաւին մօտեցած ըլլալով, մեր Առաջնորդը իջաւ անոնց մէկուն մէջ և միւսը ետեւէն կերթար ի պատիւ Ն. Արքայութեան:

Մեսրոպ սրբազանն, ընկերութեամբ Մուսթաֆա Էֆենտի Սատիի, որ եզրիպտական իշխանութեան կողմանէ գիմաւորելու համար մինչև ի շոգենաւ դա-

ցած էր, նմանապէս ընկերութեամբ Վահագնէն և Աղէքսանդրիոյ ազգային քաղաքական ժողովոց մեծարգոյ անդամոց՝ ելաւ ի թիւրահանէն, ուր Նորին Արքայութեան համար բացուած հեշտը քիչ մը նըստելով, իւր ժողովրդեան սիրալիր ու ջերմեանք յարգանքն ընդունեցաւ: Քաղաքի առաջնորդ գերապատիւ տէր Արքեպիսկոպոսն, որ 10 օրէ աւելի է, մեր առաջնորդին գալստեանը կը սպասէ, ներկայ էր այս գիմաւորութեան հանդիսին:

Գերապատիւ Մեսրոպ սրբազանը ընկերութեամբ Արքեպիսկոպոսն և Մուսթաֆա Էֆենտի, մտնելով ի քառաձի փառաւոր կառքն, որ իշխանութեան կողմանէ յուղարկուած էր, ուղևորեցաւ յեկեղեցի ուղեկցութեամբ բաղձաթիւ ժողովը. դեռն որ կառքերով կերթային: Առաւմարութիւնը յուղարկած էր նաև ձիաւոր զինուորներ (սովմարի) համազոյն տղա, որոնք ըստ սովորութեան, ձեռքերն ինքնապիսնանքը դէպ ի վեր բռնելով՝ Արքազանին կառքը շրջապատած էին:

Մեր բարեխնամ Ս. Առաջնորդը յեկեղեցին հասնելուն, փութացաւ ջերմեանք մաղթանքներ ընել առ Աստուած՝ մեծազօր տէրութեան պայծառութեանը համար, բարձրապատիւ Խըտիվին և անոր իշխանազուն ընտանեաց կենաց երկարութեանը և ազգիս յառաջդիմութեանը ու միութեանը համար. յետոյ համաօտ ատենախօսութեամբ մի իւր խորին և անկեղծ շնորհակալութիւնները յայտնելով ներկայ գտնուող հաւատացեցող, յաւելցուց թէ իրեն եղած այս ժողովրդական սիրալիր ցոյցերը և իշխանութեան ու ազգին կողմանէ մատուցեալ պատիւներն՝ իւր արժաւորութեան վեր կը համարի. զի «Ես միմիայն առանց ժողովրդեանս, ոչինչ եմ», ըսաւ:

Այս ատենախօսութեան ետեւ, Նորին Արքայութեանը եկեղեցական շքեղ թափօրիւ ելաւ յԱռաջնորդարան. ուր Աղէքսանդրիոյ ազգային քաղաքական ժողովոյն կողմանէ և ի դիմաց եղբայրանակ հայոց, հետեւեալ ուղեքն կարգացուեցաւ:

Գերապատիւ սրբազան Հայր,

Ձեր Արքայութեան երկարատեւ բացակայութիւնէ ետեւ փառաւոր վերադարձը՝ անմեկնելի ուրախութիւն մի պատճառեց մեզ: Այս բարեպատեհ առթիւ եղած ուրախանքներուն բարձագոյն աղաղակները, չքիչ ընդունելութեան մը արտաքին այս ցոյցերը՝ որոնք մեր առ ձեր անձնանուէր Արքայութեան ունեցած սրգեական անբացատրելի սիրոյն նշանները կը համարուին, անբաւական են այս վայրկեան մեր ներքին զգայական լիովին յայտարարը ըլլալու: Քանզի դուք կուգաք, ոչ իբր աշխարհական այն Մակեդոնացին, որ տիրապետական ոգւոյ և ունայն փառախոխութեան նպատակն ունէր, և ոչ բռնութեան փշուղի դաւադրանով մեզ կը մօտենաք, այլ առաքելական խոնարհութեամբ՝ իսկապէս իշխան, արդարութեան և անհատական իրաւանց ձայնը լսելի ընելու համար: Եւ այս պատճառաւ եզրիպտաբանկ ազգայինք երկար տանէն ի վեր ձեր բերկրութիւնը գալստեանը անհամբեր կըստանան, ինչպէս երբեմն Ս. Թէքէ իմաստուն Եպիմոնիդէսին՝ որ զանոնք յղգաատութիւն և յուղղութիւն բերելով՝ աստուածոց բարկութեան երկնատեղաց շանթերը անոնց վրայէն դաղրեցոյց. ինչպէս նաև կըստանան զալստեանը Սողոմոն, որ իւր վարչական անաչառ օրհնագրութեամբ նոցա քաղաքական և ընկերական վիճակը կարգաւորեց:

Եթէ Յունաստան այնպիսի հանձարեղ և արդարասիր կառավարներ ունենալու նախանձելի բազմ ընկեցաւ, երկինք չըլլայու նաև մեզ այս շնորհը՝ ձեր առաքելական լիցիաքայլերը յԱղէքսանդրիա ուղղելով: Այսպէս պարտ վայրկեան մեզ՝ կանխաւ գոհանալ՝ զԱստուծոյ, զի հանցաւ իւր Բնութեամբ վերստին ի գիրկս իւր բանաւոր հօտին դարձնելու. որ իբր այն լուսնէն սիւնը՝ ուղեցոյց պիտի հանդիսանայ, իւր հոգեւորական գիտութեամբը զմեզ լուսաւորութեան և բարեք կենցաղաւորութեան խաղաղութեամբ արիւնքը առաջնորդելու:

Մտղթեմ, ուրեմն, առ բարձրեալ, որ զձեր սրբազնութիւնը՝ ձեր հովուական սուրբ աթոռոյն վրայ երկար տարին իւր անդողդոզ և հաստատուն պահելով, ի սէր և ի միութեան հաստատուեց զմեզ արդար կենդանի ընդհովանեալ գումարանիդ սրբութեան ի յամայր ամա:

Եզրիպտոսի գերապա. սրբազան Առաջնորդը կամ Պատրիարքը այս ուղեքն հետեւեալ պատասխանը տուաւ, որ անմիջապէս ի զիր առնուեցաւ:

Սիրելիք, ծանր են արդարև հայրական պաշտօնի

պարտաւորութիւններն առ որդիս. սակայն ծնողաւոր և ջերմեանք որդւոց հօր մը պարտաւորութիւնքը աւելի ծանրադոյն են: Քանզի այնչեղ կը տեսնեմ իմ Աստուածապարզ և սիրելի ժողովրդեանս այս բերկրալից շարժումը, ձեր հայրենասիր զգացմանց այս գեղեցիկ արդիւնքը, ձեր օրդական սիրոյ յայտարար այս աղիւս խրախոյսները, յիշաւ ի սիրտս գործաւորը կը լսուի և մտքս՝ այսպիսի ընտիր ժողովրդեան մը հայր հանգիստ նալու պաշտօնին ծանրութիւնը այսօր աւելի հիացմամբ կը նկատեմ: Այսպէս այն երկնաւոր Հօգեմէն՝ Տեառն մերոյ Աստուածային սիրովը կողաշնամ զձեզ, սիրելիք, այս սրտառուչ և երջանիկ պաշտօն մը միայնելով ձեր զգայուն սիրտերը իմ գործելալ սրտի հետ, խնդրեմք ի նմանէ միաբանութեամբ որ իւր շնորհօք ամենայն աշխարհի խաղաղութիւն և իւր սուրբ եկեղեցւոյ հաստատութիւն պարգեւէ, և զամենայն ժողովուրդս վիճակի մերոյ և զձեռքին հոգեւոր օրդիւք մեր ի Քրիստոս՝ օրհնեցէ երկնային սուրբ օրհնութեամբ իւրով, ամեն:

Գերա. Մեսրոպ սրբազանը՝ երէկ մինչև երեկոյ ազգայնոց սիրալիր այցելութիւնները ընդունելէ ետեւ այս առաւօտ 27 Հունուարի՝ ընկերութեամբ Վահագնէն և Աղէքսանդրիոյ ազգային վարչութեան անդամոց, գերապատիւ Արքեպիսկոպոսի և քանի մի քահանայից մեկնեցաւ ի Վահագնէն ելլելու:

Վահագնէն մէջ գերա. Մեսրոպ սրբազանին եղած փառաւոր ընդունելութեան նկարագիրն ալ հետեւեալն է. զոր Եզրիպտոսէն յուղարկած են մեզ ի հրատարակութիւն:

Հունուար 27 ամսաթիւը՝ փառաւոր և մեծ հանգիսի օր մըն էր Եզրիպտահայոց համար. քանզի հետագիրը աւետեց թէ գերա. Մեսրոպ արքեպիսկոպոսը Աղէքսանդրիայէն շոգեկառք կը նստի: Եւսոյի պէս շուկային խանութները զոյգուեցան և ժողովուրդը որոշեալ ժամանակէն յառաջ սկսաւ խումբ խումբ ի կայարան գիմելու, իւր բարեխնամ Առաջնորդին յաջող վերադարձը և բարի գալուստը շնորհաւորելու համար. քանզի յիշեալ ուրախութիւն աւելաւ արդէն ի միտմ վայրկեանի տարածուած էր բոլոր մայրաքաղաքիս մէջ: Շողեկառքը՝ ըստ եւրօպացւոյ ժամը 4ին կէսօրէն ետեւ հասաւ ի կայարանն ուր Նորին Արքայութեան (որուն ուղեկցեցին Վաղապետ առաջնորդ Արքեպիսկոպոսը, Աղէքսանդրիոյ և Վահագնէն ազգային Քաղաքական ժողովոց մեծապատիւ անդամքն, տեղապահ տէր Արքեպիսկոպոսը, ինչպէս նաև Աղէքսանդրիոյ Փոխառաջնորդ՝ առաջիկայ տէր Արքեպիսկոպոսը) բարձրապատիւ Խըտիվին յատկացեալ ամենափառաւոր սննեակը հրաւիրուեցաւ. և այնտեղ քառօրէ մի աւելի հանգստանալէ՝ և ըստ արժանոյն մեծարուելէ ետեւ՝ ի պաշտօնէ պարտաւորեցաւ շքեղ յոյժ կառք մի նստել, ընկերութեամբ Արքեպիսկոպոսը և գէպ ի սուրբ Եկեղեցին երթալ: Այս փառաւոր կառքը՝ որ Եւրոպայէն եկող արքայազուն իշխանաց ընդունելութեանը յատկացեալէ, առաջին անգամն է որ կը զործածուի Պատրիարքի մը ընդունելութեան համար: (Եւստի արժան է որ այստեղ մեր բարեխնամ առաջնորդը Պատրիարք կը խոչնդի և այս բարձր տիտղոսով ճանչուած և ընդունուած է եզրիպտական իշխանութեան): Բաղձաթիւ հրապարակի հետեւեալ շքեղ զարդարեալ Վ. Արքայութեան ետեւէն կերթային և հարկաւոր աւելի հանդիսականաց կառքերը հասարակութեան անցուղարձ կարգիլէին: Զարմանալի էր տեսնել արտաքին զործոց պաշտօնայ վսեմա. Նուպար փաշայի՝ ամենապարզ կառքով մի, ընդունելութեան հանդիսին խոնարհաբար հետեւելու իբրև ճշմարիտ ազգասէր հայ մի, ի մեծ ուրախութեան հանդիսականաց. որոց մէջ կը գտնուէին մեր համազօրի կաթողիկէ եղբարցմէ ևս շատ երեւելի անձինք. իսկ Սպարտի աղղը գրեթէ ամբողջ ներկայ էր այս փառաւոր հանդիսին մէջ: Ժողովուրդը՝ յաղթող ներու յատկացեալ բնական հպարտութեամբ, ուրախ և զուարթ կերպարանք մի ունէր, մանաւանդ տեսնելով որ զօրանոցներէն Նորին Արքեպիսկոպոսն մատուցուած բարեկերպ զինուորական երաժշտութեամբ կը կատարուէին:

Սուրբ եկեղեցիէն գրեթէ հարիւր քայլ հեռու հետեւադէպ երկու կարգի բաժնուեցան և եկեղեցական հանգէսը քաղաքականին յաջորդեց: Գերա. Մեսրոպ սրբազանը կառքէն իջնելով, սկսաւ դէպ ի եկեղեցին գիմելու. որուն հետեւեալ բոլոր ժողով







— Կ. Պօլսոյ Հայ լրագրորենքն կիմանամք թէ Սոյ մէջ աղղային ցաւալի խոսովութիւն մի տեղի ունեցեր է 'ի կողմանէ կուսակցայ' խիղոզո կաթողիկոսին : Կը պատմեն թէ նոյն քաղաքին վանուց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ մինչդեռ քահանայն սուրբ պատա-  
րազ կը մատուցանէր, ժողովրդեան մէկ մասը նախ պատարադիչ երէցին վերայ յարձակելով՝ բռնու-  
թեամբ վար կիջեցնէ սեղանէն, և յետոյ զԼորըն-  
աիւր Սիրտիչ կաթողիկոսն ևս իւր աթոռէն կիջեցնէ :  
Տեսցուք թէ Կիլիկիոյ այս աղղային երկպառակութե-  
ան և խոսովութեան ինչ պիտի ծագի : Տար Լու-  
սաւորիչ որ աղղայեան հեռութիւններ չունինար յիշ-  
եալ կաթողիկոսական խնդրոյն լուծումը . որուն դէմ  
կը բողոքէ Ս. Լ. Նիմաճնայ վեհա. կաթողիկոսը յա-  
ռաջ բերելով թէ Կ. Պօլսոյ ընդհանուր ժողովոյն  
և իւր նախագահ Պատրիարքին ձեռնհասութենէ վեր  
է այսպիսի եկեղեցական խնդիր մի որոշելը, առանց  
խորհրդակցութեան և դիտութեան ծայրագոյն Պատ-  
րիարքի Հայաստանեայց Ս. Կիլիկիոյն :

Հնաւորի այս եկեղեցական խնդրոյն նկատմամբ  
մեր վեհա. կաթողիկոսին առ Կ. Պօլսոյ Ս. Պատ-  
րիարքն յուղարկած հեռագրական նամակին պատճէնը :

Ժողովն Կ. Պօլսոյ ընդ ձերով նախագահութեամբ  
տնոր քան զիւր սահմանադրութիւն և դիտաւորութիւնն  
յուզէ և լուծէ զեկեղեցական փափուկ խնդիրս, որպիսի  
է Սոյն և Սղթմարայն, և որ յաւային 'Սրբազնու-  
թիւն ձեր ընդ քողով մերս փոխանորդութեան՝ ընդդէմ  
նուիրական աւանդութեանց սրբոց Հարց և իրաւանց  
մայր Աթոռոյն, յօժարի գործել յանուն մեր առանց  
մեր գիտութեան, և զայնպիսի խնդիրս և զնոր Սահ-  
մանադրութիւնն յանձնադրատեան հեղինակել ձեռն  
արկանէ, որ 'միմայն անկէ ընդհանուր ժողովոյ' ըստ  
եկեղեցական օրինի զուտարկող ընդ նախագահութեամբ  
կաթողիկոսի ամենայն Հայոց 'Սղթմարական կանոնք եկե-  
ղեցւոյ և մեր ոչ կարեւոր օրինաւոր ճանաչել զպղպոսի  
որոշում' . և առ 'ի զատուց առնուել աղղայեան հետեա-  
նաց յապագային, աղղ տոնեմք ձեզ զգուշանալ 'ի ըն-  
դէմ 'ի շուրջայ Հարց սրբոց :

Ծայրագոյն Պատրիարք և

կաթողիկոս ամենայ Հայոց .

ԳԵՆԵՐ

ՁԱՆԱՅԱՆ ԵՒ ԵՐԵՎԱՆ

Զմիւռնիա, 12 Փետրուար :

Մահմեդականաց Բուրպան Պայրամի սոսնախմբու-  
թիւնը երկուշարթիւն սկսեալ սովորական հանգիսիս  
և ամենայն բարեկարգութեամբ կատարուեցաւ :

— Բանի մը օր անձրեւ դալէ ետեւ, որ հարկաւոր  
էր երկրին մշակութեանը, հիւսիսային չոր օդը դար-  
ձեալ սկսաւ տիրել և բաւական ցուրտ կընէ :

— Մեծաշուք մօտիւ տը Պարէր, որ իղմիրի Գաղ-  
ղիոյ ընդհանուր հիւսպատոս կարգուած է ժամանակէ  
մը 'ի վեր, անցեալ շաբթու հասաւ 'ի քաղաքս և  
անմիջապէս սկսաւ իւր պաշտօնը վարելու :

— Հնդկաստանէն հասած լուրերը կրճանուցա-  
նեն թէ վսե. լորտ Սայո, որ անդղական Հնդկաս-  
տանի փոխարքայ էր և 'ի Կալիկաթա կըրնակէր,  
մահմեդական կրօնամուկ երկրացիէ մը դաւաճանու-  
թեամբ սպաննուեր է : Մարդասպանը՝ որ բռնուած  
և բանտարկուած է, անձնական վրէժխնդրութենէ  
շարժեալ այս եղեռնագործութիւնը բեր է, հետե-  
ւաբար քաղաքային պատճառ մի չկայ կըսեն :

— Ըմբռնկայի յիշեալ — 'Կահանայաց հասարակա-  
պետութեան նախագահին որդին՝ որ այժմ խտալիս  
կը գտնուի ընկերութեամբ Հէրթման զօրապետին,  
մօտեիս 'ի Կ. Պօլսոյ պիտի գայ կըսեն. ուր՝ տարակոյս  
չկայ, թէ իւր բարձր կացութեանը արժանաւոր մե-  
ծարանօք պիտի ընդունուի Բարձրագոյն Դոնէն :

— Կայսերական հրամանաւ, գաւառաց կուսակալաց  
քով գտնուող Սուլայիկի պաշտօնը շնչուելով, Լա-  
տընի վիլայէթին մուսուլման մեծաշուք Գրիգորաբի Լ-  
րիսիարքի — Պէյը մօտեիս պիտի մեկնի 'ի Կ. Պօլսոյ :

Հիշեալ պաշտօնին յատկացեալ գործերը՝ յետ  
այսորիկ մեծա. Տիրան Եփէնտին պիտի տեսնէ . որ  
ինչպէս յայտնի է, մեր վիլայէթին կուսակալութեան  
թարգմանն է 'ի քաղմաց հետէ, և իւր փափուկ պաշ-  
տօնն ամենայն արժանաւորութեամբ 'ի գործ կընէ :

— Կոր դրամանոց (Պանքա) մի հաստատուելու վե-  
րայ է 'ի Կ. Պօլսոյ, ընդ պաշտպանութեամբ լորտ Տե-

լինկ և՛ լորտ Պիլիկէր կենդանադէտ երեւելի ան-  
ձանց : Լայս դրամանոցը՝ որ պիտի կոչուի Հասարակաց  
Հինութեանց 'Կրամանոց (Պանք տէ Կրամա ինկա-  
լիք), այս օրերս իւր կարգադրութեանց և պայմա-  
նաց ցուցակը ներկայացոյց վաճառականութեան  
պաշտօնեայ վսե. Եթէմ փաշային :

— Կըսուի թէ Պէրլինի և Բեդէրսպուրիի գահ-  
լինքները առաջարկած են Լնդղիոյ կառավարութեան  
համաձայնութիւն մի հաստատել մէջերնին արդիւն-  
լու համար զվտանդաւոր յառաջդիմութիւնն Եթէմ-  
նասիօնալ կոչուած տիեզերական ընկերութեան . ու  
բուն՝ նպատակը ամենայն ինչ հասարակաց ընել է  
կամ լաւ ևս է ըսել մեծատանց հարստութեանց մաս-  
նակից ընել զլործաւորները :

— Գաղղիական լրագիրէ մի կիմանամք որ Բեդէրս-  
պուրի մէջ մեծամարտութեամբ (տիւէլ) սպաննուեր  
է վսե. Կօլսթոյի կոմսը, որ իւր տէրութեան պաշ-  
տօնական ծառայութեան մէջ կոտորէր և ամենահա-  
րուստ անձ մըն էր : Կըսուի թէ յիշեալ կոմսը տա-  
րին երկու միլիոն զուրուշի չափ եկամուտ ունէր և  
42 տարեկան էր :

— Ս. Եփմաճնայ Լարաք ամադրոյն Գեկտեմ-  
բերի տետրակէն մէջ Սոյ կաթողիկոսին ընտրու-  
թեան խնդրոյն նկատմամբ երկար ու պատուական  
յօդուած մի կըկարդամք, զոր մեր յաջորդ թուով  
պիտի հրատարակեմք, ինչպէս նաև Հայաստանեայց  
վեհա. կաթողիկոսին առ Սոյ նորընտիր կաթու-  
ղիկոսն յուղարկած կոնգակին պատճէնը :

— Կ. Պօլսոյ հասարակութեան մէջ քանի մը օրէ  
'ի վեր խօսք մը կըստարտի եղեր, թէ արտաքին գոր-  
ծոց պաշտօնատան միւսթէշար Լըքսանդր Բարաթէօ-  
տօրի էֆէնտէն մօտեիս Բեդէրսպուրիի մէջ օսման  
եան դեսպան պիտի կարգուի :

— Իմաց կըտրուի Ոսուսնասէր հասարակութեան  
թէ Լայս կոչուած ողբերգութիւնը՝ որ յղիպտոսի  
Խըտիլիին հրամանաւ 'ի լոյս ընծայուեցաւ և անց-  
եալ ամիս 'իսկ. ամսոյն մէջ առաջին անգամ՝ ներ-  
կայացուեցաւ 'ի Գահիրէ Օբերայի թատրոնը, հա-  
յերէնի թարգմանուելու վրայ է 'ի յարգոյ Կարապետ  
աղայէ Պ. Հերիտէան, որ 'ի Գահիրէ :

— Կ. Պօլսոյ աղղային լրագրապետաց մէջ հետեւ-  
եալ ծանուցումը կըկարդամք, որ մեր դաւառական  
աղղայնոց ոչ սակաւ հետաքրքրական պիտի երևի :  
Լսարան Ա. Բ. Գի բարեկամ ընկերութեան

Լայս շաբաթ զիշեր պարոն սեպուհի ընդարձակ  
սրճարանը երկու տօնի համար ալ բաց է . ուր պի-  
տի առեւտրութեան մեծա. Ըբրահիմ էֆէնտի յու-  
րատեան խմբադիր Փարլը լրագրոյ :

Սուրբ 2 զուրուշ :

Ի դիմաց Ա. Բ. Գի բարեկամ ընկերութեան,  
Ս. ՍԵՖԵՐԵԱՆ

## ԱՌԵՆՏՐԱԿԱՆ

Ըֆիօնը կուզուի և այս շաբթու 109 կողովի չափ  
վաճառեցաւ սկսեալ 143 1/2-էն մինչև 155 զուրուշի  
էֆէն : Գնոց այս բարձրութիւնը տեղի ունեցաւ 'ի  
պատճառս ներքին կողմերէն հասած լրոց . որք կը  
ծանուցանեն թէ ցուրտը ըստ մեծի մասին աւրած է  
հնձոց սերմունքը :

Բամպակը քիչ մը հանգարտութեան մէջ կըզրտ-  
նուի, այս օրուան դիներն են 545-540 զուրուշ  
Սոյուճայի համար . 535-529 Բրքաղաճի համար  
և 470 զուրուշ կենդինարը Լտանային համար :

Բէքալոյան դիրաւաճառ է 310-350 զուրուշի  
կենդինարը, ըստ տեսակին :

## ՎԵՆՈՒՅՈՒՄ

LA VELOUTINE.

ԼԱ ՎԵՂՈՒԹԻՆ կոչուած բրիճի փոշին (բուտ-  
րա), որուն պատրաստութիւնը կատարեցապէս  
փորձուած են ճանցուած է շատ տարիներէ 'ի վեր,  
մարքասի կամ պիսմիր անուանեալ տեսակ մի սպի-  
տակ հանքով պատրաստուած ըլլալով, մարդոյս մոր-  
բոյն վերայ օգտակար ազդեցութիւն կընէ : Այս ճերմակ  
փոշին՝ որ կալցուց (եպիքլազ) է եւ գրեթէ ամենեւին  
ազքի ջրեւոնիք, մարդոյս մարմնոյն քարմուքին  
եւ ճեւեռաբար կակղութիւն մի կուտայ :

Այս պատրաստ փոշին Փարիզի մէջ Լա Բե կոչ-

ուած փողոցը Ե. Ֆար փոմատաճիքն քով, ի  
ուրիշ քաղաքները ամեն փոմատաճիքներուն եւ քիւ-  
սափիլքներուն քով կըգտնուի :

Մեծ շտեմարան տեսակ տեսակ բուրդերու՝ պար-  
նոցի եւ կրնակի գանգաւ փորրիկ պոխմաներ եւ ու-  
րիշ մանր բաներ բանելու համար, որոնք նոր հաւա-  
նէ Եւրոպայէն եւ խիստ ջափաւոր գիներով կըծա-  
ռնին : Այս շտեմարանը կըգտնուի Ֆրանկաց քա-  
ղաքիստ կրօնաւորաց եղեղեցւոյն անցքին մէջ :

## ԳԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ



ԳԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

ՋԱՆԱՅԻՆ ՀԻՒՆԵՐԹԻՆԻՆԻ

Մարդոյս չղպին գրութեան (օրէք) շատ յոգնած ըլլա-  
նալով արտ մէջ է և զիշերուն ամենափոքրիկ շարժումը կամ  
գրութիւնը վշտալի է յոյժ . վստի գի մըր դանկուտ է անոր  
ղջ : — Միակ զեղը այս է . քիչ խմէ գինի, դարեջուր, և ոչ  
լոց ըմպելիք . և աւելի աղիկ կըլլայ որ բոլորեւն հեռանա-  
նանց, և ամենին չխմես . նմանապէս խաճէ մի խմը, և ան-  
բեղ թեթիկ թէյով (չա) գոհ եղիք : Կարելի եղածին շափ-  
տուր օդ ծծէ ամեն գիշեր իմ զեղահաստեւս եղեր կամ շորհ  
կըլլէ շատ միս կեր և համեմունք (սուշ) հեռի կեցիք : Եւ  
այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ 'ի գործ դնելու  
միտքը շատով սիրտի հանգստանայ, մարմնը առողջ պիտի ըլլայ  
պիտի մոռնաս թէ ջրաց շաբթու մեծ անցար :

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՆԻՆԻՆԻ ԼԻՐԻԿԱՄԱՆՑ

Լայս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց  
թէ կըկարգուի շափէն աւելի ջրալից կըլլան կամ բաւական չե-  
լար, թէ բարը կամ աւագը երկկանց կը հասնին կամ թե-  
նանց մէջ ցաւեր կը զգայան մէջքին համապատասխանած մասը :  
Ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Լուսնու գիշերակա-  
րը ամենուրեք հրահանաց համեմատ և անոր սպեղանիով  
փէլ երկաթանց վարի կողմը անկողին մանեալ ժամանակը :  
Կարմնաչաւ անօքլան օգտութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ  
բիւզ գիշերը զար անող գործածուած պիտի ըլլայ :

ՍՏԱՄԲԵՍԻ ԼԻՐԻԿԱՄԱՆՑ

Յի և է գեղ մի չկրնար ստամոքսի գործութիւնը նորոգել  
աղիկները զայն շատով՝ ինչպէս այս զեղահաստեւս որոնք անօքլա-  
խաւնութեան կամ վստիմար կերակուրէ պատճառաւ բոլոր թեթ-  
ուութիւնը կըվսնեն և կը հասնին 'ի լեարդի (ֆուր ֆէյք) :  
Բուն գործողութիւնը կը կարգադրեն. զիշերու ստամոքի ձգ-  
տեք (սուշ) զեղերու մէջ սրանքելի ներդրութեան մի ունի և լե-  
ռու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐԲՈՒԹԻՆԻՆԻ ԹՈՒՔԱՆՈՒՄԻՑ (ԴՈՒՄԷՐ) ՀԱՋԱՆԻ

ՀԱՐԲՈՒՄԻՑ

Հնչաւութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութեան  
ամեն անոն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտ-  
րաւոր է : Ասոնց գործողութեանց անկարգ ընթացքին առաջին  
շանկերը կրնան միշտ կարգադրուիլ . Հուսնու գիշերակա-  
րը հատից միջոցաւ : Լսողը շատով կը կարմնեն արեան որ և է  
ժամանակեայ անշարժութիւնը, կը թեթեւեղեցիկ խոցած շնչերակ-  
քը, կը բարեխաւնեն շնչաւութեան ստամոքի արգոլութիւնը և կը  
բողբութեան կուտան շնչափողին ու թորեւն գիւրութեամբ ու կը  
շնչաւորապէս դարձնուի : Այս զեղահաստեւս՝ երբեք մարդոց  
զօրութեամբ կը սրբեն արեւը ամեն աղտեղութիւններէ, և  
կը կարմնան և կը զօրացնեն զգրութիւնը (օրէք) ընդդէմ ծիւ-  
կան անոն, շնչարգեւութեան, և ուրիշ թորային տկարութեանց :

ՏԱՐԱՆԱՆԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ ԲԱՐԵԿԱՄԸ

Տիւրութեան, թուրութեան և ջրացաւութեան գեղաբե-  
մը, որոնք որ և է բնական կամ գերբնական չափազանցութեան  
առջ եկած են, այս զեղահաստեւս ալլալիչ և նորոգիչ ներդրու-  
թիւնը մեծապէս օգտակար է . քանզի մարդոցութիւնը կը վերահ-  
ստանէ, մարմնոյն ամեն հիւթոյ թափումը կը կանխաւորէ, ջրա-  
ղբութիւնը կը զօրացնէ, հիւանդին միտքը կը յարգարէ և վեր-  
պէս առաջնութիւնը ձեռք կը բերէ :

Հուսնու գիշերակաւութեան ամեն օգտակար զեղերն են հի-  
տեալ հիւանդութեանց համար :

Հնչարգեւութիւն, Յօդադատութիւն, Թորացաւութիւն,  
Մարմնային անոն, Տեսաւորութիւն, Ծաւր արգոյնի,  
Խիթ (սուշ), Զրգողութիւն, Միզարգեւութիւն,  
Հարբուղի, Ամաւորութիւն, Բորբորում,  
Դիւրալան անոն, Գալուի, Ախոր ընդերաց,  
Թանջ (սուշ), Բարախիւն արտի, Անկանոնութիւն,  
Խոյլ պարանոցի, Գար կամ խիթ միզ- նանց,  
Արեւորութիւն, Նոցի, Մորթային հիւանդու-  
թեան հիւանդութիւնը Գլխացաւութիւն, Թիւնը,  
Փորացաւ :

Արեւորութեան անոն, խոցողութիւնը  
Գիտեալ արժան է որ տպեալ հրահանգներ կան ամեն լեղա-  
ւորութեան մէջ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուփին մէջ 'ի տեղի  
կու թիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ :

Այս զեղահաստեւս, որ կը շնչուի Հուսնու բժշկին անոն-  
կան վերաւորութեամբ, կը վաճառին իւր գործարանը 'ի Լու-  
տոն, Սիբիւտ կոչուած թաղը թիւ 244, 'ի գին 1 և 1 ուկն  
շրջին 2 1/4 և 1/2 շրջին տուփը, ըստ մեծութեան տպեալ :

Խմրադիր—տէր լրագրոյս,

Գ. Կ. Գ. Պալտաշեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԵԼԱՅԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ